

ԱՄՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՄԻՋԱՆՑՔ

ՊԻԼՈՏԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱՐ

ՆՊԱՏԱԿ

Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդները (Ամերիկյան խորհուրդներ) ողջունում են բարձրագույն ուսումնական հաստատությունների, տեղական կառավարությունների և մասնավոր սեկտորի հետ համագործակցությունը, որի նպատակն է զարգացնել Հայաստանում հետազոտական և ինովացիոն նախագծերի ձեռնարկումը և զարգացումը: Նմանօրինակ ծրագիրը յուրաժամ է՝ հաշվի առնելով Հայաստանի ինովացիոն ոլորտը զարգացնելու անհրաժեշտությունը աճող տարածքային և համաշխարհային մրցակցության հարթակում:

Ինովացիոն (նորարարական) միջանցք նախագիծը Ինովացիոն և արդյունաբերական զարգացման հիմնադրամի (ԻԱԶՀ) հետ մեկտեղ համաշխարհային հարթակ կստեղծի գիտական, ստարտափ և համալսարանական համագործակցությունների համար, ինչպես նաև՝ տնտեսական զարգացում շրջաններում: Ամերիկյան խորհուրդները ԻԱԶՀ-ին առաջարկում են պիլոտային նախաձեռնություն՝ շոշափելի արդյունքներ ստանալու նպատակով, ինչպես օրինակ նորագույն տեխնոլոգիաների տրանսֆերի իրականացման փորձի զարգացումը, համալսարանական հետազոտությունների մենեջմենթը և կոմերցիալիզացիան /առևտրայնացումը/, ինչպես նաև հարթակ վենչուրային ներդրողների և բիզնեսի համար: Գործընկերները վստահ են, որ պիլոտային ծրագիրը ԻԱԶՀ-ում հիմք կհանդիսանա ԳՏԻՄ (գիտություն, տեխնոլոգիա, ինժեներիա, մաթեմատիկա) կրթության ոլորտում ԱՄՆ-Հայաստան համագործակցության գործում, ինչպես նաև կվերհանի համագործակցության նոր ոլորտներ՝ ներկայացնելով ինովացիոն, արժեքայնորեն արդյունավետ և վերարտադրելի կադապարներ:

Ամերիկյան խորհուրդների մասին

Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդները, միջազգային շահույթ չհետապնդող առաջատար կազմակերպություն լինելով, անհատների և հաստատությունների համար կրթական հնարավորություններ են ստեղծում սերտորեն փոխկապակցված և արագ փոփոխվող աշխարհում հաջողության հասնելու նպատակով: Ակադեմիական փոխանակման, օտար լեզվի իմացության, գնահատման և

հետազոտության ուսումնասիրման բնագավառներում կրթական զարգացման ծրագրերի միջոցով Ամերիկյան խորհուրդները նախագծում և անց են կացնում ինովացիոն ծրագրեր, որոնք ընդլայնում են անհատական հեռանկարները և խորացնում գիտելիքները: Իր գործունեության չորս տասնամյակների ընթացքում Ամերիկյան խորհուրդները գործել է համայնքների կարիզներին համապատասխան, աշխատել է հարյուրավոր լայնամասշտաբ միջազգային կրթական ծրագրերի շուրջ, որոնք իրականացվում են 80 երկրներում, 40 լեզվով և ներկայացվում են աշխարհում ավելի քան 55,000 շրջանավարտների կողմից՝ ներառյալ կառավարության ղեկավարներին, լավագույն միջազգային մանկավարժներին, բիզնես ոլորտում նորարարներին, հասարակական գործիչներին և K-16 (բակալավրիատ) ուսանողներին:

Գործունեության ավելի քան չորս տասնամյակների ընթացքում Ամերիկյան խորհուրդները համախմբել է բիզնես ոլորտը, համալսարանները և կառավարությունը, նպատակ ունենալով հասնել համագործակցության հաստատման միջազգային կրթության ոլորտում: Ամերիկյան խորհուրդներում ինովացիոն ծրագրերը աշխարհի և ԱՄՆ-ի լավագույն փորձն է առաջադրում միջազգային առաջնորդներին ինովացիոն, հետազոտական կոմերցիալիզացիայի, զարգացման ծրագրերի և նախաձեռնողական կրթական ծրագրերի ոլորտում: Մեր հատուկ նախագծված ծրագրերի նպատակն է բարձրացնել տեղեկատվության մակարդակը ԱՄՆ-ի և աշխարհի ինովացիոն փորձի, նախաձեռնության, կոմերցիալիզացիայի, ինովացիոն կազմակերպությունների, կառավարական մարմինների և կազմակերպությունների վերաբերյալ՝ ազդելով տնտեսության և կրթության ոլորտների վրա:

Ինովացիոն և արդյունաբերական զարգացման հիմնադրամի մասին

Հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է: Այն հիմնվել է 2012 թվականին մի խումբ գիտնականների, մտավորականների և գործարարների կողմից՝ ստեղծելու համար կայուն կառուցվածք՝ Հայաստանի արդյունաբերական ներուժի զարգացմանը նպաստելու նպատակով՝ օգտագործելով հասանելի մտավոր կապիտալը:

Այս նպատակով հիմնադրամը սահմանել է բիզնես կապեր տեղական մի շարք կառույցների հետ՝ մասնավորապես առաջատար մասնավոր և պետական համալսարանների, Գիտությունների ակադեմիայի և դրան կից կառույցների, մի շարք ընկերությունների և միությունների հետ: Հիմնադրամը որոնել և վերհանել է բարենպաստ

կումերցիալիզացիոն հեռանկարով տեղական մի շարք ինովացիաներ և տեխնոլոգիաներ, որոնք հնարավոր է դուրս բերել տեղական և միջազգային շուկա:

ԻԱԶՀ-ը ստեղծել է բարձր որակավորում ունեցող փորձագետների ցանկ (հիմնականում համալսարաններից և ակադեմիայից) մի շարք արդյունաբերական ոլորտներում, ինչպես նաև ներդրել է սեփական մեծածավալ միջոցները ինովացիոն օնլայն վեբ գործիքների և մեխանիզմների գործում՝ գիտելիքի տարածմանը և արդյունաբերական համագործակցությունների զարգացմանը աջակցելու նպատակով, որոնք հնարավոր է կիրառել հատուկ նպատակով:

Հիմնադրամն ակտիվ համագործակցում է կառավարության հետ՝ ներառյալ մի շարք նախարարների, Եվրասիական տնտեսական միության կառավարական մարմինների, UNDP-ի (ՄԱԿ-ի զարգացման ծրագիր), UNIDO-ի (ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն), ռուսական և եվրոպական ինովացիոն կենտրոնների և մի շարք ազգային և միջազգային կազմակերպությունների հետ: Բոլոր այս կառույցների հետ համագործակցության արդյունքում ԻԱԶՀ-ն պատրաստել է ինովացիոն նախագծերի պորտֆոլիո տնտեսական և արդյունաբերական զարգացման ոլորտների մի շարք բնագավառներում:

Համալսարանական հետազոտությունների և նախաձեռնողական հնարավորությունների ընդլայնում (EURECA)

2010 թվականից սկսած՝ Ամերիկյան խորհուրդները իրականացնում են համալսարանական հետազոտությունների և նախաձեռնողական հնարավորությունների ընդլայնման ծրագիրը, որն իրենից ներկայացնում է երկարաժամկետ նախաձեռնություն, որը աջակցում է Ռուսաստանի էկոհամակարգին՝ հաշվի առնելով Ռուսաստանի ազգային հետազոտական համալսարանի՝ տեխնոլոգիաները կումերցիալիզացնելու հնարավորությունը: EURECA-ի նպատակն է աջակցել Ռուսաստանում գործող ինովացիոն էկոհամակարգ: Հիմնական գործընկեր են հանդիսանում հետազոտական համալսարանները, որոնք իրենց հերթին խթանում և ծառայում են տեղական տնտեսություններին և շրջաններին, և նպաստում տեխնոլոգիաների և նորարարությունների կիրառմանը: Ծագման պահից սկսած՝ ծրագիրը կառուցել է համալսարանական համագործակցություններ ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև, ինչպես նաև ստեղծել է կառավարությունից և մասնավոր սեկտորից ինովացիոն էկոհամակարգերի ոլորտում աջակցող մասնակից կազմակերպությունների վստահելի ցանց: EURECA նախագծի նպատակն է դուրս գալ ավանդական խորհրդատվության, տեխնիկական սպասարկման, համալսարանական համագործակցության փորձի

սահմաններից՝ հաստատելով երկարաժամկետ, կայուն, երկկողմանի շահավետ հարաբերություններ Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև հետազոտական և ներդրումային սեկտորներում, ինչպես նաև խթանելով համաշխարհային ինովացիոն էկոհամակարգում Ռուսաստանի ներգրավվածությունը և մասնակցությունը:

Հետևյալ հիմնական կազմակերպությունները մասնակցում են EURECA-ի և այլ ինովացիոն ծրագրերի իրականացմանը (հաստատված են Ամերիկյան խորհուրդների կողմից).

Համալսարան	Մասնավոր սեկտոր	Տարածքային տնտեսական զարգացում
Համալսարանների գիտական կայանների միավորում (AURP)	Կապիտալի մասնավոր ներդրողների ասոցիացիա (ACA)	Միջազգային բիզնես ինովացիաների միավորում (InBIA)
Ամերիկյան համալսարանների միավորում (AAU)	Փոքր բիզնեսի ներդրողների միավորում (SBIA)	Գիտական կայանների և ինովացիոն ոլորտների միջազգային միավորում (IASP)
Համալսարանների տեխնոլոգիական կառավարիչների միավորում (AUTM)	Վենչուրային կապիտալի ազգային միավորում (NVCA)	Գիտության և տեխնոլոգիայի պետական ինստիտուտ (SSTI)
Ձեռնարկատիրական տեխնոլոգիաների տրանսֆերի ազգային խորհուրդ (NCET2)	Վենչուրային կապիտալի համայնքների զարգացման միավորում (CDVCA)	ԱՄՆ-ի փոքր բիզնեսի զարգացման կենտրոնի ցանց (SBDC)
Ձեռնարկատիրական կենտրոնների համաշխարհային կոնսորցիում (GCEC)	Հյուսիսային Ամերիկայի տեխնոլոգիական խորհուրդներ (TECNA)	Ինովացիոն Ամերիկա
Համալսարանական ցանց 700+	Երկկողմանի բիզնես խորհուրդներ	Պետական տնտեսության զարգացման գերձակալություններ

ԱՄՆ-Հայաստան ինովացիոն միջանցք – պիլոտային նախագիծ

Ինովացիոն կենտրոնները նոր համաշխարհային տնտեսության ոլորտում ներկայացնում են մտավոր և կազմակերպչական կենտրոններ գիտական արդյունաբերության և վենչուրային կապիտալի թիրախային խմբերում: Առաջարկվող ԱՄՆ-Հայաստան ինովացիոն միջանցք պիլոտային ծրագիրը ունի ներուժ ամրապնդելու գիտության և արդյունաբերության ոլորտներում համագործակցությունը՝ կիսվելով R&D (հետազոտություն և զարգացում) և տեխնոլոգիաների տրանսֆերի մենեջմենթի ոլորտում ԱՄՆ-ի կուտակված լավագույն փորձով, ինչպես նաև աջակցելով համապատասխան կիրառական և ադապտացիոն կադապարների զարգացմանը հայաս-

տանյան համալսարաններում և ինովացիոն կենտրոններում: Ծրագրի նպատակներն են.

- Ստեղծել ԱՄՆ-Հայաստան համալսարանական համագործակցություններ և փորձագետների ցանց՝ հիմնված հետազոտության շահերի և զարգացման ռազմավարության ընդհանրությունների վրա,
- Ջարգացնել և կիրառել ադապտացված և կիրառական կադապարները և մոտեցումները հետազոտական մենեջմենթի արդիականացման, տեխնոլոգիաների տրանսֆերի և կոմերցիալիզացիայի ոլորտներում,
- Ձեռնարկների և վերապատրաստման մեթոդաբանության կատարելագործում. ա) R&D կոմերցիալիզացման և IP (մտավոր սեփականություն) իրավունքների, բ) ձեռնարկային մշակույթի և R&D արդյունքների կոմերցիալիզացման մեջ ներգրավված հիմնական մասնակիցների հմտությունների բարելավում՝ գիտնականների, համալսարանական հետազոտող անձնակազմի և ավարտած ուսանողների համապատասխան վերապատրաստում անցկացնելու նպատակով,
- Տարածման մեխանիզմների և մեթոդների մանրակրկիտ մշակում՝ ստեղծված կադապարների, մոտեցումների և կողմնակի արտադրանքի պրակտիկ կիրառման մակարդակը բարձրացնելու նպատակով,
- Նպաստել հասարակական և անհատ շահառուների ներգրավմանը՝ հնարավորություն ստեղծելով հայկական համալսարանների համար հաջող կոմերցիալիզացնել իրենց հետազոտության արդյունքները, նպաստել երկրի տնտեսական զարգացմանը:

Առաջարկվող ծրագիրը կհանգեցնի համագործակցային մոդուլային նախագծերի ստեղծմանը, որոնք ուղղված կլինեն ԻԱՋՀ-ի ինովացիոն ենթակառույցների զարգացմանը.

- Հնարավորություն ստեղծել 1-2 պիլոտային համալսարանների համար տարածել համագործակցային նախագծերի ձեռքբերումները, ներկայանալ որպես կրթական և գիտելիքի կենտրոններ ԻԱՋՀ-ի և Հայաստանի համար ընդհանուր առմամբ,
- Փորձագետների և համաշխարհային կազմակերպությունների համակարգի ստեղծում, որոնք պատրաստ կլինեն աջակցել համալսարաններում տեխնո-

լոգիաների տրանսֆերի կառավարման և նոր ենթակառուցվածքային նախա-
ձեռնությունների բնագավառում,

- Կիսվել ԱՄՆ-ի առաջատար հետազոտական համալսարանների և տեխնո-
պարկերի լավագույն փորձով,
- Մոբիլիզացնել հասարակական և անհատական սեկտորներից ինովացիոն և
տեխնոլոգիաների տրանսֆերի բնագավառում ներգրավված պոտենցիալ
շահառուներին:

Ծրագրի գործունեություն

Ամերիկյան խորհուրդները առաջարկում են ծրագրի հետևյալ հիմնական բաղադ-
րիչները.

1. Կարիզների գնահատում,
2. Կարողությունների զարգացմանն ուղղված մոդուլային նախագծեր,
3. Ստարտափ փոխանակման ծրագրեր առաջնահերթ արդյունաբերության մեջ:

Կարիզների գնահատում

Ծրագրի առաջին շրջանը (5 ամիս) նվիրված կլինի գործընկերների ընտրությանը,
հետազոտական համալսարանների և տեխնոլոգիական ենթակառուցվածքների
կարիզների զարգացման համապատասխան վերլուծությանը, ինչպես նաև ԱՄՆ-ի
հետազոտական համալսարանների և ԱՄՆ-ի բարձրագույն կրթության ոլորտում այլ
համապատասխան մասնակիցների կարողությունների պլանավորմանը, հիմնական
համագործակցությունից դուրս գտնվող պոտենցիալ շահառուների մոբիլիզացմանը,
Հայաստանի այլ ինովացիոն նախագծերում ծրագրի կողմից առաջարկվող
գործողությունների կիրառմանը, ինչպես նաև ԱՄՆ-Հայաստան փորձագետների
ցանցի ստեղծմանը՝ ծրագրի տարբեր բաղադրիչներին ծառայելու նպատակով:

Առաջարկվող գործողություններն են.

- **Մասնակիցների հանդիպմանը նվիրված գիտաժողով.** առանձին
կազմակերպված, կամ արդեն իսկ գոյություն ունեցող արդյունաբերական
կոնֆերանսին կից՝ այս սկզբնական կողմնորոշումը կմիացնի (մինչև 10)
գլխավոր ինովացիոն մենեջերների, անկախ փորձագետների, անհատական
սեկտորի ներկայացուցիչների Հայաստանից՝ ծրագիրը ԱՄՆ-ի կրթական,
ակադեմիական և բիզնես կազմակերպություններին ներկայացնելու

նպատակով: Ազդեցությունն ընդլայնելու նպատակով քննարկումները նաև կկենտրոնանան երորդ երկրների (օրինակ՝ Ռուսաստան, Իսրայել, Գերմանիա) համագործակցությունների վրա:

- **Համագործակցող կազմակերպությունների ընտրություն.** Կընտրվեն 1-2 ինովացիոն կազմակերպություններ (ներառյալ համալսարաններ)՝ հիմնված հետազոտական ներուժի, առկա միջազգային կապերի և Հայաստանի ինովացիոն նպատակներին համապատասխանելու հիման վրա: Այս կառույցները կնպաստեն նվաճումների տարածմանը երկրում:
- **ԱՄՆ-ի շահառուների կարողությունների ծրագրավորում.** ԱՄՆ-ի համապատասխան համագործակցող կողմերի սքրիինգ, որոնում և ներգրավում, որոնք պատրաստ են առաջարկել ինստիտուցիոնալ ներգրավում և աջակցություն: Ամերիկյան խորհուրդները արդեն իսկ ունեն ինովացիոն ոլորտում հնարավոր գործընկերների նախնական ցուցակը:
- **Փորձագետների ցանցի համալրում և ընտրություն.** Այս գործընթացի նպատակն է համախմբել շահառուներին՝ փոխշահավետ համագործակցության կադապարը զարգացնելու համար: Ամերիկյան խորհուրդները նախատեսում են աստիճանաբար հավաքագրել փորձագետների, ովքեր հնարավորություն կընձեռեն ստեղծել փորձագետների հատուկ խմբեր՝ ինովացիոն էկոհամակարգի «ինստիտուցիոնալ աուդիտ» անցկացնելու նպատակով: Սա ենթադրում է, որ փորձագետների ընտրությունը պետք է իրականացնել համակողմանի ուսումնասիրությունից հետո:
- **Տեխնոլոգիական աուդիտի ուսումնասիրություն.** Անցկացնել պաշտոնական, գրավոր գնահատում՝ Հայաստանի ինովացիոն էկոհամակարգի կարիքները ի հայտ բերելու կիրառական հետազոտության, տեխնոլոգիական տրասնֆերի և կոմերցիալիզացման գործընթացների լավագույն փորձն օգտագործելու նպատակով: Մեր մոտեցումը նախատեսում է աշխատել լավագույն բիզնես դպրոցների հետ, որպեսզի MBA (գործարար վարչարարության մագիստրատուրա) ուսանողներին հանձնարարվի անցնել պարտադիր խորհրդատվական ստաժավորում:
- **Տեղեկատվական աջակցություն և տարածում.** Ծրագրի վեբ կայքի և ռեսուրսային տվյալների բազայի ստեղծում:

Կարողությունների զարգացմանն ուղղված մոդուլային նախագծեր

Ծրագրի հաջորդ փուլում (3 ամիս) Ամերիկյան խորհուրդների փորձագիտական աջակցությամբ գործընկերները կզարգացնեն իրենց մոդուլային նախագծերը: Նախագծերը կարտացուցեն ծրագրի հիմնական իրականացման փուլի կարիզները՝ հիմնվելով մոդուլային նախագծերի զարգացման և իրականացման վրա, սահմանելով հայկական կառույցների ավելի լայն ցանց, որոնք հետաքրքրված են ուսուցման և կիրառվող մոտեցումներով և զարգացման այն կադապարներով, որոնք ստեղծվել և մշակվել են պիլոտային համալսարանական համագործակցությունների ընթացքում:

Առաջարկվող գործողություններն են.

- **Միջազգային ինովացիոն կոնֆերանս.** Ամերիկյան խորհուրդների մասնագետները կկազմակերպեն մեկշաբաթյա ինովացիոն կոնֆերանս լավագույն 5 կառավարիչների համար՝ համագործակցության և համատեղ նախագծերի ուղղվածությունը հստակեցնելու նպատակով: Քննարկվելու են այնպիսի թեմաներ, ինչպես տեխնոպարկերի կառավարման թրեյնինգ դասընթացներ, կարգավորիչ և իրավական հարցեր, ձեռնարկային ծրագիր, կազմակերպությունների և կապիտալի հետ հարաբերություններ, ինովացիոն հետազոտությունը և հասարակական կառույցների գաղափարների փաթեթավորումը կենսունակ բիզնեսում և այլն: Միջազգային բիզնես ինովացիաների միավորումը (InBIA) հավանական համագործակցող կողմ է:
- **Թեմատիկ ուսուցողական շրջագայություններ ինովացիոն էկոհամակարգերով.** Զարգացող ինովացիոն էկոհամակարգերը մշակվում են ԱՄՆ-ում՝ Միլիկոնային հովտի տարածքից դուրս: Թեմատիկ ուսուցողական շրջագայությունները մինչև 20 գործող մենեջերների և առաջնորդների համար հնարավորություն կստեղծեն ԱՄՆ-ի և Հայաստանի մասնակիցների համար կիսվել հնարավորություններով, վիճահարույց հարցերով և լավագույն փորձով: Մասնակիցները կներգրավվեն գիտաժողովներում՝ հիմնված ընդհանուր փորձի և վիճահարույց հարցերի վրա:
- **Տարածում.** Յուրաքանչյուր մոդուլային նախագծի արդյունքները կփաթեթավորվեն համապատասխան տեսքով և հասանելի կլինեն ծրագրի վեբ կայքում:
- **Նյութերը.** Ուղեցույցների և տեքստերի հայերեն թարգմանություն:

- **ԱՄՆ-ի փորձագետների կողմից անցկացվող հյուր դասախոսություններ և գիտաժողովներ Հայաստանում.** Համաշխարհային փորձագետները կտրամադրեն լրացուցիչ աջակցություն նոր ծրագրերի և մոտեցումների նախագծման և տարածման հարցում, ինչպես նաև կամրապնդվեն կառույցների միջև աշխատանքային կապերը և շահերը:

Ստարտափ փոխանակումներ առաջնահերթ ոլորտներում

Երրորդ փուլը (չորս ամիս) կստեղծի երկարաժամկետ երկկողմանի կապեր կոնկրետ գիտական հետազոտողների և ստարտափերի միջև, ինչպես նաև կընդլայնի ինովացիոն և ձեռնակրային կապերը հիմնական առաջնահերթ սեկտորների և տեղական տնտեսական խմբավորումների միջև (տես հավելված): Համագործակցության գործող անդամները կնախագծեն և կկիրառեն ստարտափների և նախնական փուլում գտնվող տեխնոլոգիաների պիլոտային երկկողմանի փոխանակման ծրագիրը: Ստարտափերը կընտրվեն Ամերիկյան խորհուրդների, ԻԱՉՀ-ի և անկախ փորձագետների կողմից՝ բաց դիմումների ընդունման հիման վրա:

Առաջարկվող գործողություններն են.

- **Ոլորտային ստարտափ փոխանակումներ.** Ստարտափերին հարկավոր է դուրս գալ լաբորատորիաներից՝ հավանական հաճախորդների և հիմնական հետազոտողների հետ հանդիպելու նպատակով: Քանի որ ոչ մի բիզնես ծրագիր չի մնում առանց փոփոխման հաճախորդի հետ հանդիպումից հետո, ծանոթացնող շնորհանդեսներ կօգնեն ստարտափերին ստանալ հետադարձ կապ և շտկել իրենց բիզնես կադապարը: Կարճաժամկետ (10 օր) հատուկ փոխանակումները ստարտափերին հնարավորություն կընձեռեն առաջին կապը հաստատել համաշխարհային շուկայի հետ և փոխգործունեություն սահմանել ոլորտի փորձագետների հետ:
- **Շուկայի ուսումնասիրություն և համապատասխանում.** Ստարտափ հիմնադիրները տեղեկանում են իրենց ոլորտի շուկայի պահանջների մասին՝ ստեղծելու համար բիզնես, որը համապատասխանում է և կարող է ազդեցություն ունենալ վկայագրված հետազոտության մեթոդների և տվյալների բազայի հասանելիությամբ:
- **Մուտք դեպի շուկա վերինարներ.** 2 շաբաթը մեկ կազմակերպվող վերինարների շաբթը ստարտափերին տրամադրում է տեղեկատվություն հիմնական հարցերի վերաբերյալ՝ ներառյալ տեղեկատվություն ԱՄՆ-ի կանոնակարգող

համակարգի, շուկայի մուտքի վերաբերյալ, ինչպես նաև նշանակվում է ամերիկյան կազմակերպություն, որը կօգնի ստարտափերին սահմանել իրենց առաջարկի համաշխարհային արժեքը:

- **Մենտորություն և ուսուցանում.** Հանդիսանալով ինովացիոն միջնորդ՝ համագործակցող կողմը տրամադրում է նշանակված մենտորներ, որոնք հանդիսանում են «ինովացիոն միջնորդներ»: Սա կօգնի առավել լավ ընկալել առաջիկա արտասահմանյան համագործակցության ստարտափի վիճահարույց խնդիրները և հնարավորությունները:

Ազդեցությունը և արդյունքները

Այս ծրագրի շնորհիվ կխթանվեն ինովացիոն և կրթական կառույցների հետազոտական և կոմերցիոն կապերը, ինչը կունենա հետևյալ ազդեցությունը և արդյունքները.

- Գործընկերները ստեղծում են երկարաժամկետ համագործակցություններ՝ վերհանելով և յուրացնելով ամերիկյան փորձը հետազոտությունների կառավարման, տեխնոլոգիաների տրանսֆերի և հետազոտության արդյունքների կոմերցիալիզացիայի բնագավառում:
- Անհրաժեշտ պայմաններ կստեղծվեն ինովացիոն էկոհամակարգերի ստեղծման կադապարային մոտեցումների տարածման վերաբերյալ:
- Կստեղծվի հանրային և անհատ շահառուների լայնամասշտաբ կոալիցիա, որոնք ներգրավված կլինեն ինովացիոն, տեխնոլոգիաների կառավարման և տեխնոլոգիաների տրանսֆերի ոլորտներում:

Հապավումների ցանկ

ԻԱԶՀ - Ինովացիոն և արդյունաբերական զարգացման հիմնադրամ

ԳՏԻՄ - Գիտություն, տեխնոլոգիա, ինժեներիա, մաթեմատիկա

AAU - Ամերիկյան համալսարանների միավորում

ACA - Կապիտալի մասնավոր ներդրողների ասոցիացիա

AURP - Համալսարանների գիտական կայանների միավորում

AUTM - Համալսարանների տեխնոլոգիական կառավարիչների միավորում

CDVCA - Վենչուրային կապիտալի համայնքների զարգացման միավորում

EURECA - Համալսարանական հետազոտությունների և նախաձեռնողական հնարավորությունների ընդլայնման ծրագիր

GCEC - Ձեռնարկատիրական կենտրոնների համաշխարհային կոնսորցիում

IASP - Գիտական կայանների և ինովացիոն ոլորտների միջազգային միավորում

InBIA - Միջազգային բիզնես ինովացիաների միավորում

IP - Մտավոր սեփականություն

K-16 - Բակալավրիատ

MBA – Գործարար վարչարարության մագիստրատուրա

NCET2 - Ձեռնարկատիրական տեխնոլոգիաների տրանսֆերի ազգային խորհուրդ

NVCA - Վենչուրային կապիտալի ազգային միավորում

R&D - Հետազոտություն և զարգացում

SBIA - Փոքր բիզնեսի ներդրողների միավորում

SBDC - ԱՄՆ-ի փոքր բիզնեսի զարգացման կենտրոնի ցանց

SSTI - Գիտության և տեխնոլոգիայի պետական ինստիտուտ

TECNA - Հյուսիսային Ամերիկայի տեխնոլոգիական խորհուրդներ

UNDP - ՄԱԿ-ի զարգացման ծրագիր

UNIDO - ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն